

Ապարանի բնապահպանական տեղեկատվության հասարակական /Օրհուս/ կենտրոն



Փորձագիտական զեկույց

Ապարան համայնքի բնապահպանական խնդիրների և
շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ

Դեկտեմբեր

2016թ

Կազմեց Օրհուս կենտրոնի համակարգող՝
Նատալյա Մանուկյանը

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ապարան քաղաքի տարածքի համալիր գնահատականը

Ապարան քաղաքը գտնվում է Արագածոտնի մարզում՝ Արագած լեռան հարավային փեշերին, Երևան-Սպիտակ ավտոմայրուղու վրա, Երևանից 57կմ հեռավորության վրա՝ հյուսիս: Քաղաքն իր բնական, սոցիալ-տնտեսական, էկոլոգիական պայմաններով խիստ տարբերվում է հանրապետության այլ բնակավայրերից նրանով, որ գտնվում է 1880-2000մ բարձրությունը վրա: Այն տեղակայված է Ապարանի սարահարթում, Քասաղ գետի վերին հոսանքում: Ապարան քաղաքի տարածքը կազմում է 523 հա: Բնակչությունը կազմում է 7 հազար մարդ: Կլիմայական տեսակետից համայնքի տարածքը գտնվում է ցուրտ, անբավարար խոնավության գոտում, որին բնորոշ է կարճատև տաք ամառ և ցուրտ ձմեռ

Ապարանն իր սոցիալ-տնտեսական, կուլտուր-կենցաղային և հասարակական կյանքով զարգացում է ապրել 1960-ական թթ-ից: Այստեղ գործել են մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ (Երևանի «Հայգորգ» միավորման մասնաճյուղը, պանրագործարանը, հացի, գարեջրի, լիմոնադի, ռադիոտեխնիկական իրերի) գործարանները, որոնք նախկին խորհրդային միության փլուզումից հետո սեփականաշնորհվել են և ներկայումս չեն գործում, կան մասնակի գործող արտադրական ճյուղեր և առանձին հիմնարկ ձեռնարկություններ (գորգագործական արտել, կահույքի արտադրամաս, այլ ձեռնարկություններ):

Ապարանի տարածքը եղել է, այժմ էլ հանդիսանում է կաթնամսային տավարաբուծության և ոչխարաբուծության շրջան:

Սկսած 1990-ական թթ-ից քաղաքում առաջացել են բավականին բարդ սոցիալ-տնտեսական պայմաններ և էկոլոգիական վիճակ: Քաղաքն այսօր ունի հրատապ, խելամիտ լուծումների կարիք ունեցող մոտ մեկ տասնյակ բնապահպանական հիմնախնդիրներ, որոնք էապես ազդում են շրջակա միջավայրի որակի և բնակչության առողջության վրա:

Օդային ավազանի վիճակը

Ապարան քաղաքի մթնոլորտի աղտոտման հիմնական աղբյուրները հանդիսանում են արդյունաբերական ձեռնարկությունները և ավտոտրանսպորտը:

Արդյունաբերական ձեռնարկություններն այժմ գործում են իրենց հզորությունների 5-10%-ի չափով: Բացի դրանից քաղաքում գործում են մի շարք փոքր ձեռնարկություններ, որոնք քաղաքի աղտոտվածության մակարդակում որոշիչ ներդրում ունեցող աղբյուրներ չեն հանդիսանում:

Մթնոլորտի աղտոտման մեջ զգալի բաժինն ընկնում է ավտոտրանսպորտի վրա, որի արտանետումներում առաջնային են ածխածնի օքսիդը, ազոտի օքսիդները, ավազի փոշին: Ավտոտրանսպորտից մթնոլորտ արտանետումները ներկա իրավիճակում կազմում են տարեկան ~ 190,5 տ, որը կազմում է քաղաքի ամբողջ արտանետումների 88,2%:

Ավտոտրանսպորտի մթնոլորտ վնասակար արտանետումներից տնտեսությանը հասցված վնասը ներկա իրավիճակում գնահատվում է տարեկան 819,2 հազ. դրամ:

Ջրային ռեսուրսների վիճակը

Ապարանի ջրային ռեսուրսների պահպանությունը լուրջ հիմնախնդիր է: Քաղաքի հարավում՝ Մուլքի գյուղից հյուսիս -արևելք ընկած հատվածում տեղակայված արդյունաբերական և կենցաղային կետաջրերի մաքրման կայանն մոտ 15 տարի չի գործում, ներկայումս ավերված և թալանված վիճակում է: Այն կառուցվել է 1980-ական թվականներին և նախատեսված է եղել նաև մոտակա գյուղերի՝ Մուլքի, Լուսագյուղի և Սարալանջի տնտեսակենցաղային հոսքաջրերի մաքրման համար: Սակայն ներկա վիճակում Ապարան քաղաքից դեպի մաքրման կայան կառուցված մոտ 1.5 կմ երկարությամբ, 500 մ տրամագծով գլխավոր կոյուղագիծը որոշ տեղերում խցանված է, որոշ տեղերում ջարդված, իսկ որոշ հատվածներ իսպառ վերացված:

Այժմ քաղաքի բոլոր հոսքաջրերն առանց մաքրման լցվում են Քասաղ գետը, որի աղտոտվածությունը բազմաթիվ անգամ գերազանցում է թույլատրելի սահմանային խտությունները՝ փոքրացնելով նրա ինքնամաքրման հատկությունները:

Գետը գործնականում վերածվել է բաց հոսող կոյուղու և կարող է դառնալ քաղաքի տարածքի նաև ստորգետնյա ջրերի (գետի հունի երկարությամբ 350-500 մետրի լայնությամբ գրունտային ջրերը գտնվում են 1,5-3մ խորության վրա) մակերեսային աղտոտման պատճառ: Համայնքում կան թաղամասեր ու փողոցներ, որոնցում կեղտաջրերի հեռացումը կատարվում է բացօթյա առուների միջոցով՝ Կանայան, Ջալայան, Նարեկացի, Մ. Գևորգ և այլն:

Անբավարար վիճակում է նաև քաղաքի ջրամատակարարման համակարգը: Քաղաքի ջրամատակարարման ներքին ցանցի երկարությունը մոտ 47կմ է, որի 70%-ը վթարային է, քանի որ կառուցված է դեռևս 60-70-ական թթ-ի սկզբին և որի պատճառով մեծ չափերի են հասնում նաև ջրակորուստները (80%): Քաղաքի հյուսիսարևելյան նոր թաղամասերը ջուր չունեն:



Քաղաքի կանաչ տարածքների վիճակը

Քաղաքի կանաչապատումը սկսվել է 20-րդ դարի 40-ական թվականներից: Քաղաքի փողոցների կանաչապատումը անբավարար է, քիչ են ֆունկցիոնալ նշանակության կանաչ զանգվածներ: Ներկա դրությամբ ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների ընդհանուր մակերեսը (զբոսայգիներ, զբոսապուրակներ, պուրակներ և այլն) կազմում է 13,4հա, ընդհանուր մակերեսի 2.5%-ը, ինչը 90-ական թվականներից սկսված էներգետիկ ճգնաժամի հետևանք է: Տնկարկների միջին տարիքը՝ 25-50 տարեկան է:



Վնասատուներով և հիվանդություններով առավել վնասված են մայրուղիներում աճող ծառերը: Անբարվոք վիճակում են քաղաքի զբոսայգիները, պուրակները: Համայնքի զբոսայգին գտնվում է անբարեկարգ վիճակում, դադարել է իր նպատակին ծառայելուց: Մայրուղիների մեծ մասի ծառայատման խտությունն անբավարար է: Հատուկ նշանակության տնկարկներից բարվոք վիճակում են գտնվում մասնավոր պտղատու այգիները: Մերձքաղաքային սանիտարապաշտպանիչ գոտիները, ճանապարհամերձ տնկարկները 90-ականներից ի վեր ` գրեթե ամբողջությամբ հատվել են:

Աղմուկի մակարդակի գնահատումը

Գտնվելով մայրաքաղաք Երևանից 57կմ հեռավորության վրա, Ապարան քաղաքն ապահովված է տրանսպորտային բավարար կապերով:

Ապարան քաղաքում աղմուկի առաջացման աղբյուրներ են հանդիսանում`

- միջպետական նշանակության Երևան-Սպիտակ մայրուղին, որն անցնում է քաղաքի միջով
- տեղական նշանակության բնակելի փողոցները

Տեղական նշանակության ճանապարհներում և փողոցներում պիկ ժամերին աղմուկի մակարդակը համաձայն սանիտարական նորմերի և կանոնների կազմում է 73դԲԱ(17):

Աղմուկի մակարդակի իջեցումը հեռավորության և կանաչ տնկարկների հաշվին կազմում է 6դԲԱ: Երևան-Սպիտակ մայրուղու վրա աղմուկի մակարդակը ,) կազմում է 85ԴԲԱ:

Երևան-Սպիտակ մայրուղուց աղմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը 4ԴԲԱ-ով:

Աղբահանության հիմնախնդիրներն Ապարանում

Վերջին 10-15 տարիների ընթացքում էական փոփոխությունների են ենթարկվել կոշտ կենցաղային թափոնների ծավալն ու բաղադրությունը: Այժմ կենցաղային աղբի ծավալի 35%-ը կազմում են սինթետիկ միացությունները: Դիտարկումները ցույց են տալիս, որ թափոնների ուտիլիզացիայի հիմնական եղանակը դրանց այրումն է, որի հետևանքով շրջակա միջավայր են արտանետվում խիստ վտանգավոր միացություններ: Այրումն իրականացվում է ոչ միայն աղբավայրում, այլ նաև աղբամաններում, փողոցում, տանը` բնակիչների վառարաններում: Հետևաբար կոշտ կենցաղային թափոնների հավաքումն ու ուտիլիզացումը Ապարանի համար համարվում է հրատապ հիմնախնդիր, որը պետք է լինի ոչ միայն ՏԻՄ-երի , այլև յուրաքանչյուր քաղաքացու ուշադրության կենտրոնում:



2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Օդային ավազանի իրավիճակի բարելավման միջոցառումներ.

Օդային ավազանի պահպանության գործընթացը արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ ավտոտրանսպորտի համար.

- ✓ լավացնել ճանապարհների ծածկույթը.
- ✓ ուժեղացնել ավտոմեքենաների տեխնիկական վիճակի և վառելանյութի որակի վերահսկումը.
- ✓ ավտոճանապարհների եզրագծով իրականացնել լրացուցիչ անտառատնկում ավտոտրանսպորտի արտանետումների վնասակար ազդեցության նվազեցման համար:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում ավտոտրանսպորտի արտանետումների քանակը նվազում է մոտ 50%-ով:

Ջրային ռեսուրսների պահպանության բարելավման միջոցառումներ.

- ✓ Հաշվի առնելով տարածքի բնապահպանական առանձնահատկությունները՝ Արաքս գետի բնապահպանական նշանակությունը տարածաշրջանի համար, Ապարան քաղաքի տնտեսակենցաղային հոսքաջրերը պետք է անցնեն լրիվ կենսաբանական մաքրում և վարակազերծվեն:
- ✓ Քասախ գետի աղտոտվածության կանխարգելման համար անհրաժեշտ է Ապարան քաղաքի գլխավոր կոլեկտորի և կենսաբանական մաքրման կայանի կառուցում: Գետի աղտոտվածության մակարդակը ջրապահպան միջոցառումների իրականացման արդյունքում կգնահատվի չափավոր, ինչը հնարավոր կդարձնի գետի շրջակայքում հանգստի գոտու կազմակերպումը:
- ✓ Կոյուղու ներքաղաքային ցանցի վերակառուցումը և հոսքակորուստների կրճատում.
- ✓ Քասաղ գետի աղտոտման կանխարգելման համար անհրաժեշտ է իրականացնել հանրության բնապահպանական կուլտուրայի և գիտակցական մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Ապարան քաղաքի աղբահանության և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման միջոցառումներ.

- ✓ Կենցաղային թափոնների տարբեր տեսակների (թղթի, մետաղի և ապակու, պլաստմասայի, պոլիէթիլենային թաղանթների) ընդունման կետերի հիմնում քաղաքում
- ✓ Երկրորդային հումքի վերամշակման ձեռնարկության ստեղծում
- ✓ Աղբամանների քանակի ավելացում մարդաշատ ու հնարավորինս շատ վայրերում՝ հատկապես քաղաքի կենտրոնական հատվածներում
- ✓ Աղբամանների փոխարինում կափարիչավոր աղբամաններով
- ✓ Տարերային աղբաթափության վայրերի վերացում ու այդ վայրերի տեսահսկում / Քասաղ գետի կամուրջի աջակողմյան և ձախակողմյան հատվածներ/

- ✓ Քասաղ գետի հունի մաքրման աշխատանքների համար, ֆինանսական միջոցների հայթայթման նպատակով՝ բիզնես ոլորտի, միջազգային դոնոր և այլ կազմակերպությունների հետ համագործակցության ստեղծում:
- ✓ Տեղական որոշումներով սահմանել աղբը չնախատեսված վայրերում թափելու և շինարարական աղբը կենցաղային աղբի համար նախատեսված աղբարկղերում թափելու համար տուգանքների համակարգ:
- ✓ իրականացնել հանրության բնապահպանական կուլտուրայի և գիտակցական մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

Քաղաքային աղբավայրի վիճակի բարելավմանն ուղղված միջոցառումներ.


Բնակչության աճի հետ մեկտեղ ավելանում է նաև կենցաղային կոշտ թափոնների քանակը և Ապարանի քաղաքային աղբավայրը, որը գտնվում է Նիգավան համայնքի տարածքում հանդիսանում է շրջակա միջավայրը աղտոտող գլխավոր օջախներից մեկը, վնաս պատճառելով օդային ավազանին /աղբի այրում/, ջրային ավազանին /Քասաղ գետ, Ապարանի ջրամբար/, հողերին:

- ✓ Անհրաժեշտ է աղբը տոփանել տրակտորներով, ծածկել հողի հաստ շերտով և կանխել աղբի հետագա այրումը.
- ✓ Անհրաժեշտ է ստեղծել սանիտարապաշտպանիչ գոտի / կանաչ տնկարկների հիմնում/ Նիգավան համայնքի հողատարածքների պաշտպանության նպատակով.
- ✓ Հիմնել շինարարական և հատուկ վտանգավոր թափոնների տեղադրման աղբավայր, հիմնել կիզարան:

Ապարան քաղաքի կանաչապատման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ

- ✓ Քաղաքային զբոսայգու կառուցապատում, ծառատնկման իրականացում, տարածքի պահպանում, ռոտզման համակարգի բարեփոխում.
- ✓ Բաղրամյան պողոտայի երկայնքով ծառատնկման իրականացում /տրանսպորտային միջոցների արտանետումները և աղմուկի մակարդակի նվազեցնելու նպատակով, /Ապարանով անցնող Երևան-Սպիտակ մայրուղու աղմուկի մակարդակը գերազանցում է թույլատրելի նորմերը 4 ԴԲԱ-ով/:
- ✓ Պարտավորեցնել բոլոր տիպի ձեռնարկությունների սեփականատերերին իրականացնել տարածքների կանաչապատում, բարեկարգում և պահպանություն.
- ✓ Զինկոմիսարիատի պուրակի, դեռևս 1960-ական թվականներին տնկված ծառերի էտի կազմակերպում, դրանց տապալման ռիսկերը և հետևանքները բացառելու նպատակով.
- ✓ Ապօրինի ծառահատումները վերահսկելու նպատակով կանաչապատ տարածքների գույքագրում,, հաշվառման անցկացում
- ✓ քաղաքի կանաչապատման համակարգի գործունեությունը համակարգող մասնագիտացված կառուցվածքային ստորաբաժանման ստեղծում քաղաքապետարանում

Ապարանի Օրհուս կենտրոնի համակարգող՝



Նատալյա Մանուկյան